գաւորացն, նոյնպէս եւ մեզ եղերուք եւ մի՛ ընդունիք զանէծքն իմ. այսուհետեւ թէ չար կայ ի ձեր մէջն՝ հանեցէ՛ք, և ով հաշարութիւն անէ՝ սպանեցէ՛ք. եւ այլ այսպիսի բան: Եւ աղային ասացեալ թէ Դու հանապազ չուրջ ե՛կ և զհաչարիքն որոնէ՛: Եւ ով որ կայր սիրելի զօրպաներուն մեծամեծք եւ բարեկամ նոցա, մինչև Ի–ից կամ Լ–ից՝ գնոսա ի գիշերիս սպանեցին. եւ տէլլալն կանչեց երեկոյս թէ Սպահի եւ էնկիչէրի ամենեքեան թո՛ղ յիւրեանց տեղն նստին խաղաղութեամբ:

Մայիս ամիս օր եչի. գնացի ի ժամ եւ անտի ի տուն եւ անտի ի խանութ: Օրս Կէօրքն վախեր էր եւ ի վարպետ ոչ գնացել, բազումս որոնեալ գտան գնա ի կալէլու աղբիւրն:

Այսօր թագաւորն ի չուրջ կու գայր թէպտիլ. եւ ըսկսան զապտ անել զքաղաքս բռնաւորք ամենեքեան եւ գատաւորք՝ հրամանաւ թագաւորին եւ սըրաղօլի սահմանեալ, գՑանճիկն գտնեալ. որք որ ծառայ չէին թագաւորին եւ գծառայի կերպն գգեցեալ էին՝ զայնոսիկ գտնէր եւ զպղպատս կորատէր, որ էր այն օրէն էնկիչէրոցն, եւս գթօղլուխն պատառեալ տայր ի ձեռս նոցա, եւ զփակեղս որ նման էին էնկիչէրոցն եւ կամ սպահոցն՝ զայն ծիւ ծիւ արարեալ. և զՀայոց գեղին մէստն և զգունով չաղչուրն, զմեծ փակեղն և զղաւուխն, զգունով վերարկուն և զապրշումէ գօտին միջաց, զայսոսիկ գտեալ գտնէր և կորսուէր:

Շաբաթ օրս (3 Մայիս) գնացի ի ժամս մեր և պատարագին թուղթ մի եկաւ հասաւ եւ կարդացին, եւ էր՝ Հրամանաւ ազդու Սուրբ Աւետարանին գերասուճան վարդապետութեան և բոլոր տանս Ծունոց և ամենայն Հայոց՝ Եղիազար վարդապետէս սիրով և աւրհ–